ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ԱՄՅԱԿԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1941-1945 թթ.)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.

1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև 1939 թ. օգոստոսի 23-ի 10 տարի ժամանակով կնքված չհարձակվելու պայմանագիրը, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Խորհրդային Միության վրա՝ նպատակ ունենալով ոչնչացնել այն, զավթել երկրի տարածքներ և ստեղծել գերմանական մեծ կայսրություն: Դեռևս Լեհաստանի վրա հարձակվելուց մի քանի օր առաջ, 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում Երրորդ ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ Հիտլերը հատուկ ցուցում էր տվել իր զորավարներին, որ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջեն սլավոնական ժողովուրդներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա: «Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին», - իր գեներալներին ոգևորելու համար ցինիկաբար ասել է ֆյուրերը[1]:

Ուստի պատահական չէր, որ պատերազմն սկսվելու առաջին իսկ օրվանից հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու իր գոյությունը, որովհետև պարզ գիտակցում էր, թե ինչ վտանգ է սպառնում իրեն, եթե գերմանացիները հաղթեն ռուսներին: Չէ՞ որ հենց պատերազմի սկզբին Թուրքիան Խորհրդային Հայաստանի և Ջավախքի սահմանների մոտ էր կուտակել 26 սպառազեն դիվիզիա[2] և հարմար պահի էր սպասում այնտեղ ներխուժելու և հայերի նոր ցեղասպանություն կազմակերպելու համար: Հայ ժողովրդի հիշողության մեջ դեռևս թարմ էին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի դաշնակից Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ կիրառված զանգվածային կոտորածներն ու աքսորը: Ցեղասպանության բարբարոսական իրադարձությունների հետևանքով Արևմտյան Հայաստանում գազանաբար սպանվեցին ավելի քան 1,5 միլիոն հայեր, իսկ մոտ 800 հազարը բռնագաղթեց՝ սփռվելով աշխարհով մեկ:

---

[1] *Այդ փաստաթղթի բնօրինակը պահվում է ԱՄՆ-ի ազգային արխիվում: Առաջին անգամ այն հրապարակվել է ամերիկյան «Նյու-Յորք թայմս» թերթում, 1946 թ. դեկտեմբերի 24-ին և ներկայացվել նյուրենբերգյան դատավարության ժամանակ (20.XI.1945-1.X.1946), որտեղ դատվում էին նացիստական Գերմանիայի մի խումբ պարագլուխներ: Այդ բառերը փորագրված են Վաշինգտոնում գտնվող հրեական հոլոքոստի թանգարանի պատերից մեկի վրա:*

[2] Штеменко С. М. *Генеральный штаб в годы войны, М., 1968, с. 54.*

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին Թուրքիայում գլուխ բարձրացրին պանթուրքիզմի գաղափարախոսները, որոնց հրատարակած աշխատություններում ու քարտեզներում բացակայում էր **Հայաստան** անունն ընդհանրապես: «Մեծ Թուրքիայի սահմանները ձգվում էին մինչև Իթիլ (Վոլգա) - Ուրալ, Ղրիմ, Միջին Ասիա - Յակուտիա», - նշել է թուրքական «Բոզ քուրթ» («Գորշ գայլ») ամսագիրը 1941 թ. հուլիսի համարում «Թուրքիզմը սպասում է» հոդվածում՝ դրան կցելով «Մեծ Թուրքիայի» քարտեզը նշված սահմաններով[3]:

«Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին», - 1941 թ. օգոստոսի 25-ին նշել է "Правда"-ն «Հայ ժողովուրդը Խորհրդային Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդողում: -Նա գիտե, թե ինչ բան են կոտորածները, ջարդերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը՝ առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Այդ նպատակով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսել էր մարդակեր Հիտլերը Խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը»:

Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթա-նակում իր արժանի ավանդն ունեցավ նաև հայ ժողովուրդը: Նրա ավելի քան 600000 զավակներ մասնակցեցին պատերազմին, որից 200000-ը զոհվեցին մարտերում: Ըստ հաշվարկված տվյալների, Խորհրդային Միությունից պատերազմին մասնակցել է ավելի քան 500000 հայ, որից 300000-ը՝ Խորհրդային Հայաստանից: 100000 հայեր ֆաշիզմի դեմ մասնակցել են արտասահմանյան երկրների զինված ուժերի և դիմադրական շարժման շարքերում[4]:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հայերի՝ զանգվածաբար մասնակցելը, մեր կարծիքով, ոչ միայն նորաստեղծ հայրենիքի և արտա-սահմանյան երկրների (որտեղ նրանք ապաստան էին գտել թուրքական կոտորածներից փրկվելով) օրինավոր քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների դրսևորում էր, այլև, հավանական է, որ 1915 թ. Թուրքիայում 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը հովանավորած Գերմա-նիայից վրեժխնդիր լինելու՝ ազգային բարձր ինքնագիտակցության պոռթկում էր: Պատերազմին հայ ժողովրդի մասնակցության մեծ ակտիվություն դրսևորվեց ոչ միայն իր զավակներին ռազմաճակատ ուղարկելով, այլև տարբեր զորատեսակների կազմում բոլոր նշանավոր ճակատամարտերում, պաշտպանական ու հարձակողական գործողությունների ժամանակ հայ ռազմիկների ցուցաբերած հերոսությամբ, կրտսեր, միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմում հայերի մեծ տեսակարար կշռով:

---

[3] Տե՛ս Օգնություն ագիտատորին և պրոպագանդիստին, 1944, № 24, էջ 20:

[4] **Арутюнян К. А.** *Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Е., 2004, с. 47.*

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 11635 մարդու, որոնցից՝ ռուսներ՝ 8182, ուկրաինացիներ՝ 2072, բելոռուսներ՝ 311, թաթարներ՝ 161, հրեաներ՝ 108, հայեր՝ 99, ղազախներ՝ 96, վրացիներ՝ 89, ուզբեկներ՝ 69, մորդվիններ՝ 61, չուվաշներ՝ 44, ադրբեջանցիներ՝ 43 և այլն[5]: Ընդհանուր առմամբ, հայերից ԽՍՀՄ հերոսի կոչում է շնորհվել 106 հոգու, որոնց 4-ին՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում (30.XI.1939 -13.III.1940), 99-ին՝ Հայրենական մեծ պատերազմում (22.VI.1941-9.V.1945) և 3-ին՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին կատարած սխրանքների համար: Խորհրդային Միության մարշալ Իվան (Հովհաննես) Քրիստափորի (Խաչատուրի) Բաղրամյանը և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանը այդ բարձր կոչմանն արժանացել են երկու անգամ. պատերազմի տարիներին կրկնակի հերոսի կոչմանն են արժանացել ընդամենը 115 մարդ, ադրբեջանցիներից ու վրացիներից կրկնակի հերոսներ չեն եղել: Հայրենական մեծ պատերազմում կատարած անօրինական սխրանքների համար 26 հայ ռազմիկներ պարգևատրվել են Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով ու դարձել զինվորական փառքի այդ պատվավոր շքանշանի լրիվ ասպետներ, որոնց իրավունքները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1967 թ. սեպտեմբերի 6-ի հրամանագրով հավասարեցված են Խորհրդային Միության հերոսների արտոնություններին: Փառքի առաջին աստիճանի շքանշանով են պարգևատրվել ընդամենը 2500 մարդ[6]: Հարկ ենք համարում նշել, որ երբ 1943 թ. նոյեմբերի 8-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնադրվեց Փառքի երրորդ աստիճան շքանշանը, ապա Կարմիր բանակում առաջինը Փառքի երրորդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց սերժանտ Ժորա (Գևորգ) Ավանեսի Իսրայելյանը (17.XI.1943)[7]: Հետագայում խիզախ զինվորը պարգևատրվեց նաև Փառքի 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով և դարձավ այդ շքանշանի լրիվ ասպետ[8]:

Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար պատերազմի տարիներին Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման են արժանացել 8 հայորդիներ՝ Համո Յոլյան (3.VI.1942), Անաստաս Միկոյան, Իվան Թևոսյան (30.IX.1943), Բագրատ Հարությունով, Նիկոլայ Նարինյան, Բորիս Սալամբեկով, Անդրանիկ Խաչատրյան (5.XI.1943) և Լևոն Օրբելի (10.VI.1945):

Հայրենական մեծ պատերազմի ակտիվ մասնակից, ակադեմիկոս Կիրիլ Իվանի Շոլկինին (Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանին) Խորհրդային Միությունում ատոմային և ջրածնային զենքի ստեղծման գործում ներդրած

---

[5] *Герои Советского Союза, М., 1984, с. 245 (ադրբեջանցի համարվող 43 հերոսների մի զգալի մասը քրդեր, թալիշներ, թաթարներ, լեռնային հրեաներ են և այլն):*

[6] *Ордена и медали СССР, М., 1974, с. 90.*

[7] *Красная Звезда, 20.XII.1943; Самые знаменитые награды России, М., 2000, с. 273-274.*

[8] *Кавалеры ордена Славы трех степеней, М., 2000, с. 232-233.*

մեծ ավանդի համար շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում (1949, 1951, 1958):

Հետպատերազմյան տարիներին պատերազմի մասնակից երեք հայ ականավոր գիտնականների՝ ՄԻԳ կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանին (1956, 1957), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ատոմային և ջրածնային զենքի ստեղծման ու փորձարկման, Մոսկվայի հակահրթիռային պաշտպանության համակարգի ստեղծման աշխատանքների ակտիվ մասնա-կից, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր Սամվել Քոչարյանին (1962, 1964) և ակադեմիկոս, ՀՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանին (1968, 1978) Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչումը շնորհվել է կրկնակի: Վ. Համբարձումյանին շնորհվել է նաև Հայաստանի ազգային հերոսի կոչում (11.X.1994): Նրա առաջարկած ինվարիանտության սկզբունքը, որի հիման վրա մշակվել է պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, պատերազ-մի տարիներին օգտագործվել է ռազմական նպատակներով. այդ տեսությունը հիմք է հանդիսացել գիշերային պայմաններում գործող օպտիկական նշանացույցների ստեղծմանը:

Պատերազմի մասնակից մի շարք հայ ականավոր գիտական-ների նույնպես շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Նրանց թվում էին՝ ակադեմիկոս, ինժեներ-էլեկտրատեխնիկ Անդրանիկ Իոսիֆյանը (1958), որը 1941-1975 թթ. եղել է Մոսկվայի № 627 գործարանի տնօրենը. պատերազմի տարիներին այդ գործարանում մշակել և արտադրել են՝ տորպեդներ, շարժական ռադիոկայաններ, սնուցող մարտկոցներ և այլն, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-մայոր Անդրանիկ Պետրոսյանցը (1962), որը պատերազմի ժամանակ եղել է ԽՍՀՄ տանկային արդյունաբերության ժողկոմի տեղակալ, իսկ հետագայում՝ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-մայոր Իվան Կնունյանցը (1966), որը պատերազմի տարիներին եղել է Կարմիր բանակի գլխավոր շտաբի փորձագետ և հսկայական աշխատանք կատարել զինված ուժերի հակաքիմիական պաշտպանության բնագավառում, Պարույր Մաթևոսյանը (1967), որը 1942-1983 թթ. Ստալինգրադի «Կարմիր հոկտեմբեր» մետալուրգիական գործարանի տնօրենն էր, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Բուռնազյանը (1976 թ.), որը պատերազմի տարիներին համապատասխանաբար եղել է Հարավային, Հարավարևմտյան, Կալինինի, Մերձբալթյան 1-ին և 2-րդ, Հեռավորարևելյան ռազմաճակատների ռազմասանիտարական վարչությունների պետ, իսկ պատերազմից հետո երկար ժամանակ վարել է ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը, ակտիվորեն մասնակցել տիեզերական բժշկության ստեղծման ու զարգացման աշխատանքներին, բժշկական ծառայության գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Հարությունովը

(1974), որը ուկրաինական երրորդ ռազմաճակատի գլխավոր վիրաբույժն էր, իսկ պատերազմից հետո ընտրվել է ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի իսկական անդամ, եղել է Ուկրաինայի առողջապահության նախարարության գլխավոր նյարդավիրաբույժը, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Ն. Բուրդենկոյի անվան նյարդավիրաբուժության ինստիտուտի տնօրենը, բժշկական ծառայության փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Աբրահամյանը (1969), որը ակտիվորեն մասնակցել է Խորհրդա-ֆիննական պատերազմին, եղել Լենինգրադյան զինվորական օկրուգի հոսպիտալի ուրոլոգիական բաժնի պետ, իսկ պատերազմի ժամանակ ղեկավարել Երևանի զինվորական հոսպիտալների ուրոլոգիական բաժանմունքները, այնուհետև ուրոլոգների համամիութենական ընկերության նախագահն էր:

Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, իրենց կյանքի գնով մարտական առաջադրանքները կատարած 5 հայորդիների անուններ ԽՍՀՄ պաշտպանության նախարարի հատուկ հրամաններով առհավետ գրանցվել են այն զորամասերի ստորաբաժանումների անձնակազմերի ցուցակներում, որտեղ նրանք ծառայել են: Այսպես, 7 հայ օդաչուներ՝ իրենց այրվող ինքնաթիռներն ուղղեցին հակառակորդի մարտական տեխնիկայի և հետևակի կուտակումների վրա՝ դառնալով գաստելլոյականներ: Հինգ հայորդիներ դարձան մատրոսականներ՝ իրենց մարմնով փակելով թշնամու կրակակետերի հրակնատները, զոհվելով նպաստեցին մարտական առաջադրանքի կատարմանը:

1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով, պատերազմին մասնակցել են 69 հայ գեներալ, մեկ ծովակալ (Ի. Ս. Իսակով՝ Տեր-Իսահակյան) և ավիացիայի մեկ մարշալ (Ս. Ա. Խուդյակով՝ Ա. Ա. Խանփերյանց): Հետպատերազմյան շրջանում պատերազմի մասնակից 83 հայորդու նույնպես շնորհվել է գեներալի կոչում: Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմին մասնակից հայերից 152-ին շնորհվել է գեներալի կոչում: Նրանցից Հովհաննես Բաղրամյանին 1955 թ. մարտի 11-ին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի կոչում: Նույն թվականի մարտի 3-ին Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում էր շնորհվել Իվան (Հովհաննես) Ստեփանի Իսակովին: Հետպատերազմյան տարիներին պատերազմի մասնակից հայ ծովային սպաներից չորսին՝ Վալերիան Իոսիֆի Սուրաբեկովին, Իվան Խաչատուրի Գալուստովին, Աշոտ Առաքելի Սարկիսովին և Վլադիմիր Քրիստափորի Սահակյանին շնորհվել են փոխծովակալի (վիցե-ադմիրալ), իսկ Արտավազդ Արամի Սագոյանին, Միհրան Կարապետի Պետրոսյանին, Զարմայր Մամիկոնի Արվանովին և Վլադիմիր Սեմոնի Փիրումովին՝ դերծովակալի (կոնտր-ադմիրալ) կոչումներ[9]:

Պատերազմի շրջանում հայ զորավարներից ու զորահրամանատարներից մեկը ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հրամանատարի

---

[9] **Арутюнян К. А.,** *նշվ. աշխ., էջ 853-845:*

առաջին տեղակալ էր՝ ծովային գլխավոր շտաբի պետ (ծովակալ Ի.Ս. Իսակով), մեկը՝ Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի առաջին տեղակալ՝ռազմաօդային ուժերի շտաբի պետ (ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակով՝Ա. Ա. Խանփերյանց), մեկը՝Մերձբալթյան 1-ին, ապա՝Բելոռուսական 3-րդ ռազմաճակատի հրամանատար (բանակի գեներալ Ի. Ք. Բաղրամյան), երեքը՝բանակի հրամանատարներ. գեներալ-գնդապետ Ի. Ք. Բաղրամյանը եղել է 11-րդ գվարդիական, ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակով - Ա. Ա. Խանփերյանցը՝օդային 1-ին և 12-րդ, իսկ գեներալ-լեյտենանտ Մ. Ա. Պարսեղովը՝40-րդ բանակի հրամանատար, 8 հայորդիներ եղել են կորպուսի հրամանատար. գեներալներ Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը՝50-րդ և 73-րդ, Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը՝90-րդ հրաձգային, Բագրատ Իսահակի Առուշանյանը՝11-րդ գվարդիական հրաձգային, Վլադիմիր Ստեփանի Տամրուչին՝22-րդ մեքենայացված, Տիմոֆեյ Վլադիմիրի Դեղեօղլյանը՝2-րդ գվարդիական հեծյալ, գնդապետներ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը՝11-րդ գվարդիական տանկային, Արտեմ Կարապետի Պողոսովը՝20-րդ տանկային և փոխգնդապետ Համբարձում Մելիքի Մելիքյանը՝106-րդ հրաձգային կորպուսի հրամանատար[10]: 28 հայորդիներ եղել են դիվիզիայի, ավելի քան 100-ը՝բրիգադի ու գնդի հրամանատարներ:

Պատերազմի տարիներին Կարմիր բանակի կազմում գործում էին 6 հայկական ազգային դիվիզիաներ, որոնց շարքերում մարտնչել են ավելի քան 60000 հայ ռազմիկներ: Հայկական 76-րդ լեռնահրաձգային Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ դիվիզիան, որը կազմավորվել էր Հայաստանում՝1920-1922 թթ.՝Հայաստանի Առաջին հանրապետության բանակի, ապա Հայկական կարմիր բանակի վերակառուցման հետևանքով, 1938 թ. վերակազմավորվել էր ոչ ազգային միավորման: 1941 թ. հունիս-հուլիս ամիսներին համալրվելով Հայկական ԽՍՀ մարդկային ու նյութական միջոցների հաշվին, այն կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը: Դիվիզիայի 16000-անոց անձնակազմից շուրջ 14000-ը հայեր էին: Դիվիզիան 1941 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, համաձայն 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում կնքված խորհրդա-իրանական պայմանագրի, մասնակցեց խորհրդային զորքերի իրանական գործողությանը, որի հետևանքով, նախ, երկիրը մաքրվեց գերմանա-ֆաշիստական գործակալներից ու ձախողվեցին Իրանը Խորհրդային Միության դեմ ներքաշելու հիտլերյան պլանները, ապա այն նաև լուրջ նախազգուշացում էր Գերմանիայի փաստական դաշնակից Թուրքիայի հետադիմական կառավարությանը, որը հարմար պահի էր սպասում՝իրականացնելու Անդրկովկաս ներխուժելու և նրան տիրանալու իր վաղեմի երազանքները: Իր պատմական առաքելությունը հաջողությամբ կատարելուց

---

[10] *Комкоры. Военный биографический словарь, т.1, М., 2006, с. 354, 355, 359; т. 2, с. 101, 162, 254-256.*

հետո, սեպտեմբերի 10-ին դիվիզիան մեկնեց ռազմաճակատ և նույն ամսի 26-ից Հարավարևմտյան ռազմաճակատի 38-րդ բանակի կազմում Ուկրաինայի Պոլտավայի մարզի տարածքում մասնակցեց պաշտպանական ծանր մարտերին: Հետագայում նա հատկապես աչքի ընկավ Ստալինգրադյան ճակատամարտում (17.VII.1942 - 2.II.1943) վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, պարգևատրվեց Լենինի շքանշանով: Այնուհետև, գվարդիականներն ակտիվորեն մասնակցեցին Կուրսկի ճակատամարտին (5.VII-23.VIII. 1943), Բելոռուսական գործողությանը (23.VII-29.VIII.1944)՝ արժանանալով **Վիտեբսկյան**, *իսկ գնդերը՝* **Պոլոցկյան** *պատվավոր անվանը: Բելոռուսական գործողության ավարտից հետո Կ. Ե. Վորոշիլովի անվան Լենինի շքանշանակիր, կարմրադրոշ հրաձգային 51-րդ գվարդիական դիվիզիան մասնակցեց խորհրդային Մերձբալթիկայի ազատագրման մարտերին և հաղթանակը դիմավորեց Բալթիկ ծովի ափերին՝ Լիտվայի տարածքում: Բելոռուսական և Մերձբալթյան գործողությունների ժամանակ դիվիզիան մարտնչում էր 6-րդ գվարդիական բանակի կազմում, որը մտնում էր բանակի գեներալ Ի. Ք. Բաղրամյանի հրամանատարությամբ գործող Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի մեջ:*

Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր 1942 թ. փետրվարի վերջերին՝ Կերչի թերակղզում, Ղրիմի ռազմաճակատի 51-րդ բանակի կազմում մասնակցեց Կերչի ծանր մարտերին, որոնց ընթացքում հերոսաբար զոհվեց դիվիզիայի սիրված հրամանատար, գնդապետ Սիմեոն Գևորգի Զաքյանը: Նա հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ աճյունը տեղափոխվեց Երևան և ապրիլի 5-ին թաղվեց մայրաքաղաքի Ս. Կիրովի անվան մանկական զբոսայգում: Այնտեղ կանգնեցվեց նաև հերոս հրամանատարի հուշարձանը:

Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան, որը ստեղծվել էր Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին), ապա՝ Երևանում, 1941 թ. օգոստոս - 1942 թ. մարտ ամիսներին Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ, ապա՝ 18-րդ բանակների կազմում՝ Նովոռոսիյսկ-Տուապսե շրջանում, մեծ զոհերի գնով, փակեց գերմանաֆաշիստական զորքերի ճանապարհը դեպի Անդրկովկաս:

Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր 1941 թ. օգոստոս - 1942 թ. փետրվար ամիսներին Հայկ. ԽՍՀ Ստեփանավան, ապա՝ Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքներում, Անդրկովկասյան ռազմաճակատի 44-րդ բանակի կազմում դեկտեմբերի 15-ից մարտերի մեջ մտավ Մոզդոկի շրջանում: Կուբանի, Ուկրաինայի, Մոլդովայի տարածքներում մարտնչելով հասավ Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա ու Չեխոսլովակիա: Մարտերում ցուցաբերած խիզախության ու քաջության համար դիվիզիան պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանով, արժանացավ «Կիրովագրադյան» և «Բրատիսլավյան» պատվավոր անունների: Կազմալուծվել է 1945 թ. հուլիսի 2-ին՝ Հունգարիայում:

Կովկասյան նախալեռներից՝ Գրոզնու մատույցներից, Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի վրայով դեպի Լեհաստան և Գերմանիա ձգվեց Հայկական 89-րդ

հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, որն ավարտվեց Բեռլինի գրավմամբ և Էլբայի ափ դուրս գալով: Նրան շնորհվեց **Թամանյան** *պատվավոր անունը, նա պարգևատրվեց Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Այն կազմավորվել էր Երևանում՝ 1941 թ. նոյեմբեր - 1942 թ. հունվար ամիսներին: 1943 թ. փետրվարից դիվիզիայի հրամանատարը գեներալ-մայոր Նվեր Գևորգի Սաֆարյանն էր, որը փոխարինել էր նույն թվականի հունվարի 10-ին հերոսաբար զոհված գնդապետ Արտաշես Արշակի Վասիլյանին: 1945 թ. սեպտեմբերին դիվիզիան վերադարձավ Հայաստան և տեղակայվեց Երևանում, Քանաքեռում և Էջմիածնում: Այն գոյություն ուներ մինչև 1956 թ. ամառը և համարվում էր Անդրկովկասյան կարմրադրոշ զինվորական օկրուգի առաջատար միավորումներից մեկը:*

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ձևավորված հայկական ազգային զորամիավորումներից միայն մեկը Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիան էր, որ չմեկնեց ռազմաճակատ և չմասնակցեց մարտական գործողություններին: Այն ստեղծվել էր Երևանում՝ 1942 թ. դեկտեմբերին: Նրա հիմնական խնդիրն էր պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը, ինչպես նաև ռազմաճակատի համար երթային գումարտակներ պատրաստելն ու այնտեղ ուղարկելը: Դիվիզիան պատվով կատարեց իր առջև դրված խնդիրը: Նրա շարքերում մարտական պատրաստություն ստացած ավելի քան 10000 հայ զինվորներ մեկնեցին գործող բանակ և իրենց արժանի ավանդը ներդրեցին գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախման գործում[11]*:*

Բացի վերոհիշյալ ազգային զորամիավորումներից, պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում կազմավորվեցին կամ համալրվեցին՝ 31-րդ, 61-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմները ռազմաճակատ մեկնելու նախօրյակին զգալի չափով համալրված էին հայերով:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը: Չնայած ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից եկած «սև թղթերին», նրա հերոսական ջանքերի շնորհիվ այդ ժամանակաշրջանում հանրապետությունում ոչ միայն պահպանվեցին և հզորացան մինչ այդ եղած գործարանները, այլև շահագործման հանձնվեցին 30 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թվում՝ ավիացիոն, ավտոդոդերի, կոմպրեսորների, ժամացույցի, շարժիչավերանորոգման և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակների, այդ թվում՝ 10 տեսակի զինամթերքի, ականանետների, ականների, նռնակների,

---

[11] *Հայկական դիվիզիաների մասին ավելի մանրամասն տե՛ս* **Հարությունյան Կ.**, *Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Ե., 2002:*

ավիառումբերի կորպուսների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբաթթվի, հեղուկ քլորի, քրոմի անհիդրիդի, քլորոֆորմի արտադրությունը[12]: 1942 թ. հոկտեմբերից Երևանի № 447 գործարանը (հետագայում՝ Հայէլեկտրամեքենաշինական) սկսեց վերանորոգել վնասված ինքնաթիռները: Այնուհետև գործարանն սկսեց արտադրել «Յակ-3» կործանիչ ինքնաթիռի թևեր և շասի, որոնք ուղարկվում էին Թբիլիսիի ինքնաթիռաշինական գործարան, որտեղ և հավաքվում էր վերջնական արտադրանքը: 1945 թ. № 447 գործարանն սկսեց «ՈւՏ-2Մ» թեթև ինքնաթիռների սերիական արտադրությունը, որոնք տեղում փորձարկվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ[13]:

Գյուղատնտեսության աշխատողների հերոսական ջանքերով, այդ տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով ավելացան: Գյուղատնտեսական ավանդական մշակաբույսերից բացի, սկսեցին արտադրվել մեծ քանակությամբ տեխնիկական նոր մշակաբույսեր՝ ծխախոտ, ճակնդեղ, ինչպես նաև կարտոֆիլ: Մեծ չափով ընդարձակվեցին հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները, ինչը հնարավորություն տվեց հանրապետությունն ապահովել սեփական հացով և դրսից հացի ներմուծումը հասցնել նվազագույնի: Զգալի հաջողությունների հասան նաև անասնապահները, որոնցից շատերն արժանացան կառավարական պարգևների:

Պատերազմում տարած հաղթանակում զգալի էր նաև գիտության, կրթության, պարավեստի, գրականության, մշակույթի բոլոր բնագավառների աշխատողների ավանդը: Չնայած դժվարագույն պայմաններին, 1943 թ. նոյեմբերի 29-ին հիմնադրվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, որի առաջին պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ՝ ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանը և Վարդան Գուլքանյանը: Գիտությունների ակադեմիայի հիմնադրումն այդպիսի ծանր ժամանակաշրջանում՝ պատմական խոշոր երևույթ էր հայ իրականության մեջ: Հայ գիտնականները, ինչպես նաև գրողները, երաժիշտները, դերասանները, նկարիչները, մանկավարժները, բժիշկները, մտավորականության բոլոր ներկայացուցիչներն իրենց կարողություններն ամբողջովին նվիրեցին հաղթանակի գործին: Այսպես, Հայաստանի աշխատավորության խնայողությունների հաշվին, Կարմիր բանակի համար կառուցվեցին «Սովետական Հայաստան», «Հայաստանի կոլտնտեսական», «Զանգեզուրի լեռնագործ», «Անդրկովկասի երկաթուղային, «Սովետական ուսուցչություն», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի պիոներիա» տանկային շարասյուները, «Սովետական Հայաստան» գրահագնացքը, «Սովետական Հայաստան»,

---

[12] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 33, գ. 5, թ. 3-34:*
[13] *Նույն տեղում, ֆ. 313, ց. 1, գ. 8, թ. 104:*

«Հաղթանակ», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաէսկադրիլիաները և այլն:

ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում, ռազմական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները նույնպես ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում զգալի ավանդ ունեցան: Բավական է թվարկել նրանցից միայն մի քանիսի անուններն ու վարած պաշտոնները. Անաստաս Միկոյան- 30.VI.1941 - 4.IX.1945 թթ. եղել է ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի անդամ, 7 հոգուց բաղկացած, արտակարգ լիազորություններով օժտված այդ պետական բարձրագույն մարմնի ձեռքում էր կենտրոնացած ԽՍՀՄ ողջ իշխանությունը: Իվան Թևոսյան -1940-1948 թթ.՝ ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ, ապա՝ նախարար, Արտեմ Միկոյան-1940-1978 թթ.՝ «Միգ» կործանիչ ինքնաթիռների ստեղծման կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր, Համո Յոլյան - 1940-1945 թթ.՝ № 92 հրետանային գործարանի տնօրեն, Ստեփան Ակոպով-1941-1946 թթ.՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմ, ապա՝ նախարար, Սուրեն Աղաջանով - 1941-1945 թթ.՝ № 21 ավիագործարանի տնօրեն, Հարություն Տեր-Մարգարյան-1941-1945 թթ.՝ Նովոսիբիրսկի ավիագործարանի գլխավոր ինժեներ, Պարույր Մաթևոսյան - 1941-1971 թթ.՝ Ստալինգրադի «Կրասնի Օկտյաբր» մետաղամշակման գործարանի տնօրեն, Բագրատ Հարությունով-1939-1946 թթ.՝ ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ և շատ ուրիշներ[14]:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հայերը, աշխարհի առաջադեմ ժողովուրդների հետ, մեծ զոհողությունների գնով, զգալի ավանդ են ներդրել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Նրանք հերոսաբար մարտնչել են բոլոր ռազմաճակատներում, տարբեր զորատեսակների կազմում, իրենց ռազմական ունակություններով ու խիզախությամբ բարձր պահել հայ ժողովրդի պատիվը, նոր փառքով հարստացրել նրա մարտական ավանդույթները: Հաղթանակը կռողների շարքում էին նաև Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորները և սփյուռքահայերը՝ նպաստելով ոչ միայն ֆաշիզմի ջախջախմանը, այլև հայ ժողովրդի մի նոր եղեռնը կանխելուն:

---

[14] Ավելի մանրամասն տե՛ս **Մանուկյան Հ. Հ.,** Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակում (1941-1945 թթ.), Ե., 2000:

УЧАСТИЕ АРМЯНСКОГО НАРОДА В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 гг.)

АРУТЮНЯН К. А.

Резюме

Армянский народ, вместе с другими народами СССР, принял самое активное участие в разгроме немецко-фашистских захватчиков и внес достойную лепту в историческую победу. В целом в войне участвовало около 600 000 армян: из них – 300 000 из Советской Армении и более 200 000 из других республик Советского Союза, около 100 000–из зарубежных стран. Свыше 200 000 армян погибло не фронтах Великой Отечественной. Звание героя Советского Союза присвоено 106 воинам, из них – 4 в Советско-финской войне (1939-1940), 99 – в Великой Отечественной войне (1941-1945), 3 – за подвиги, совершенные в послевоенные мирные годы. Помимо этого, звания Героя Советского Союза были удостоены 10 представителей других национальностей, уроженцы Армении либо проживавшие до войны на е¸ территории. Маршал Советского Союза И. Х. Баграмян и летчик Н. Г. Степанян стали дважды героями. В годы войны в составе Красной Армии действовали 6 армянских национальных дивизий: 89, 390, 408, 409, 261, 51-я гвардейская (бывшая 76-я армянская горно-стрелковая).

Кроме перечисленных в Армении форсировались или комплектовались 31, 61, 136 (15 гвардейская), 138 (70 гвардейская), 151, 236, 320 и 406 стрелковые дивизии.

В победу над фашизмом свой вклад внесли также труженики тыла. За время войны были сданы в эксплуатацию 30 новых промышленных предприятий, в том числе авиационный, компрессорный, шинный и др. заводы. В годы войны было освоено производство около 300 видов новых изделий, в их числе 10 видов боеприпасов. Посильную помощь в разгроме фашизма оказали армянская диаспора, Армянская Апостольская церковь.

THE PARTICIPATION OF THE ARMENIAN PEOPLE IN THE GREAT PATRIOTIC WAR (1941-1945)

K. HARUTYUNYAN

Abstract

The total number of the Armenians who participated in the World War II was 600.000; half of them were from Armenia, the others from different Soviet Republics and from foreign countries. More than 200.000 of them were killed at the front. The Hero of the Soviet Union title was awarded to 106 Armenians; 4 of them were awarded in 1939-1940 during the Soviet-Finn war. 99 – during the Great Patriotic War and 3 in post-war years for the feat during the piece years. Ten representatives of other nationalities who were born or worked in Armenia were awarded the title of the Hero of the Soviet Union.

I. Baghramyan was awarded the title of Marshal of the Soviet Union. H. Isakov was awarded the title of the Admiral of the Fleet of the USSR. H. Babadjanyan was awarded the title of the Chief Marshal of Amored Forces and Sergey Aganov was awarded the title of the Marshal of Engineering Corps and S. Khoudiakov (A. Khamferyants) – Marshal of the Air Forces.

The Armenian Diaspora and Armenian Apostolic Church were another contributor to the victory against the fascism.